ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԱՐԱՄԻ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Վոլոդյայի Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գրետա Հովհաննեսի Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Գորիսի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. հունիսի 6-ին՝ ժամը 12.00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2024 թվականի մայիսի 3-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանրակրթական դպրոցի միջին օղակի մայրենիի առարկայական ծրագրի կարևոր հիմնախնդիրներից են աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, ստեղծարարության, հաղորդակցական, համագործակցային կարողությունների ձևավորումը և այլն: Անշուշտ, նշված կարողությունները ձևավորվում են միջին դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերին, սակայն նշված հիմնախնդրի լուծման ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացվում են մայրենիի դասագործընթացում: Մայրենիի առարկայական ծրագրի բոլոր բաղադրիչների լիարժեք ուսումնասիրումը բավարար հիմք է ստեղծում գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու սովորողների կարողության զարգացման համար: Հանրակրթության ընթացքում ուսումնասիրվող բոլոր առարկաների մեջ մայրենի լեզուն ունի կենտրոնական դեր. նրա միջոցով են հիմնականում իրականացվում սովորողների կրթադաստիարակչական գործունեությունը և բարոյաարժեքային համակարգի ձևավորումը, հոգեկան գործընթացների զարգացումը: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրակրթական դպրոցի միջին օղակում՝ մայրենիի ուսումնասիրության գործընթացում, ոչ միշտ են ըստ ամենայնի լուծվում սովորողների խոսքի զարգացման խնդիրները: Այս հանգամանքը մենք առավելապես հիմնավորում ենք ոչ թե հանրակրթական դպրոցի չափորոշիչներում և մայրենիի ծրագրում սովորողների խոսքի զարգացմանը տրված ոչ լիարժեք տեղով ու դերով, այլ ուսումնական գործընթացում այդ խնդրի լուծմանը միտված մեթոդական համակարգի անկատարությամբ:

Միջին դպրոցում սովորողների բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը, նրա մանկավարժահոգեբանական սկզբունքներն ուսումնասիրել և իրենց աշխատություններում դրանց անդրադարձել են հայ մանկավարժներ Ս. Աբրահամյանը, Ա. Թոփուզյանը, Ջ. Գյուլամիրյանը, Թ. Ալեքսանյանը, Լ. Ասատրյանը, Մ. Աստվածատրյանը, Ա. Գալստյանը, Ս. Գյուլբուդաղյանը, Գ. Խաչատրյանը, Հ. Հարությունյանը, Ա. Մանուկյանը, Պ. Պողոսյանը, Թ. Ջուհարյանը, Ա. Տեր-Գրիգորյանը և այլք, արտասահմանյան գիտնականներ Ի. Բլինովը, Վ. Բեզռուկովան, Լ. Վիգոտսկին, Ի. Գորելովը, Գ. Գորոդիլովան, Օ. Գուլևիչը, Ն. Ժինկինը, Վ. Զվերևան, Տ. Լադիժենսկայան, Վ. Պենֆիլդը, Ժ. Պիաժեն, Լ. Ռուդը, Է. Սեպիրը, Է. Ռոջերսը, Ս. Սաունդերը և այլք: Սակայն մեր գիտական հետաքրքրությունները վերաբերում են ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի մայրենիի դասերի ընթացքում դպրոցականների բանավոր խոսքի զարգացման գործընթացին, որը դեռևս գիտականորեն լիարժեք չի հետազոտվել:

Հետազոտության նպատակը ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի միջին օղակի հայոց լեզվի համալիր դասընթացի հենքի վրա սովորողների խոսքի զարգացմանը միտված ավանդական և ժամանակակից

տեխնոլոգիաների համադրմամբ աշխատանքների իրականացումն է, հիմնախնդրի շուրջ արդիական ուսումնամեթոդական համալիրի մշակումը:

Հետազոտության օբյեկտը ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի աշակերտների խոսքի զարգացմանը միտված աշխատանքների իրականացման գործընթացն է:

Հետազոտության առարկան ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի աշակերտների խոսքի զարգացմանը միտված արդյունավետ մեթոդների և միջոցների համալիրի մշակումն է:

Հետազոտության գիտական վարկածը: Հիմնական դպրոցի միջին օղակում սովորողների բանավոր խոսքի զարգացման մակարդակը կարող է լիարժեք լինել, եթե՝

ա. այդ խնդիրը դառնա ոչ միայն մայրենիի, այլ նաև դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների, մանկավարժական ողջ կոլեկտիվի նպատակը,

բ. մշակվի և դպրոցում կիրառվի սովորողների խոսքի զարգացման մեթոդների ընդհանուր և միասնական համակարգ և այդ հիմնախնդրի լուծման արդյունավետությանը նպաստող մանկավարժական պայմաններ,

գ. ուսուցման գործընթացում ակտիվացվեն սովորողների ճանաչողական հետաքրքրությունները, մշակվեն դրանց բավարարմանը միտված գիտելիքահեն մեթոդական հնարներ:

Հետազոտության խնդիրները:

1. Դիտարկել հանրակրթական հիմնական դպրոցի սովորողների խոսքի զարգացման մեթոդիկայի գիտատեսական հիմքերը. ուսումնասիրել կապակցված խոսք կառուցելու աշակերտների կարողության ձևավորմանը նպաստող ավանդական և ժամանակակից մեթոդների քննարկման հիմնական սկզբունքները լեզվաբանական, մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ:

2. Ուսումնասիրել հիմնախնդրի դրվածքը ՀՀ հանրակրթական դպրոցի միջին օղակում, բացահայտել առկա խնդիրներն ու դրանց պատճառները:

3. Մշակել, ներդնել և փորձարկել ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցում սովորողների բանավոր խոսքի զարգացմանը նպաստող աշակերտակենտրոն մեթոդական համակարգ և կիրառական վարժությունների համալիր:

4. Փորձարարության և նրա արդյունքների վիճակագրական վերլուծության արդյունքների միջոցով ստուգել և գնահատել գրագետ բանավոր խոսք կառուցելու աշակերտների կարողության ձևավորմանը նպաստող առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

5. Ուսումնասիրության նպատակի և խնդիրների տեսանկյունից իրականացնել փորձարարական աշխատանքների արդյունքների վիճակագրական վերլուծություն, ներկայացնել առաջարկություններ:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք հետևյալ **հետազոտական մեթոդները**.

➢ տեսական. կատարվել է ատենախոսության հիմնախնդրին առնչվող մանկավարժամեթոդական, հոգեբանական գրականության, պետական չափորոշիչների, հանրակրթական դպրոցի ծրագրերի, մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասագրքերի, մեթոդական ձեռնարկների ուսումնասիրություն, հիմնական սկզբունքների վերլուծություն:

➢ Էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցախույզ, դասալսումներ, արդյունքների վերլուծություն:

➢ Վիճակագրական մեթոդներ՝ հետազոտության ընթացքում ստացված տվյալների համակարգում, վիճակագրական վերլուծում, արդյունքների մաթեմատիկական մշակում և տրամագրային ձևավորում:

Հետազոտության գիտական նորույթը

• Հիմնախնդիրը դիտարկվել է հայ և արտասահմանյան մանկավարժության համատեքստում:

• Ներկայացվել է տեսականորեն արժանահավատ և փորձարարությամբ հիմնավորված ներառարկայական և միջառարկայական կապերի շրջանակներում ՀՀ հանրակրթական դպրոցի միջին օղակի սովորողների բառապաշարի հարստացմանը և այդ հիմքի վրա նրանց բանավոր խոսքի զարգացմանը նպաստող մեթոդական համակարգ (խոսքի զարգացման քայլաշարային մեթոդ):

Հետազոտության տեսական նշանակությունը

1. Հստակեցվել են սովորողների խոսքի զարգացմանը նպաստող լեզվաբանական, հոգեբանական, մանկավարժական և մեթոդական սկզբունքները և դրանց հաշվառումը մայրենիի, ինչպես նաև միջին դպրոցում դասավանդվող այլ առարկաների ուսումնասիրման դասագործընթացում:

2. Ներկայացվել է հանրակրթության տարրական և միջին օղակներում սովորողների բանավոր խոսքի զարգացման գործընթացի փուլային հաջորդայնության սկզբունքը՝ որպես խոսքի զարգացման համակարգված գործընթաց:

3. Մշակվել, փորձարկվել և ներկայացվել է միջին դպրոցի սովորողների բանավոր խոսքի զարգացմանը նպաստող գործնական համալիր:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մշակած և փորձարկած վարժությունների համակարգը և նրա մեթոդական համալիրի բովանդակությունը համապատասխանում է միջին դպրոցի առարկայական չափորոշչի պահանջներին. այն կնպաստի միջին դպրոցի աշակերտների բառապաշարի հարստացմանը, կարող է կիրառվել միջին դպրոցում ինչպես մայրենիի, այնպես էլ այլ առարկաների դասավանդման գործընթացում: Այն կարող է օգտակար լինել նաև ուսուցիչներին, մեթոդիստներին, ապագա մանկավարժներին և կրթության քաղաքականությունը մշակողներին:

Հետազոտության հիմնական փուլերը: Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով՝ 2016-2023 թթ. ընթացքում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**.

1. ՀՀ հանրակրթական դպրոցի միջին օղակի մայրենիի չափորոշիչներով և առարկայական ծրագրով նախատեսված ուսումնական նյութի ուսումնասիրությունը, ժամանակակից մեթոդական համալիրի ներդրումը բավարար նախապայման են աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար:

2. Պայմանավորված դպրոցի միջին օղակի աշակերտների տարիքային, կազմաբնախոսական,մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով, նրանց ճանաչողական հետաքրքրություններով, դրանց բավարարման ձևերի ինքնատիպությամբ և աստիճանական փոփոխություններով, հասարակական-քաղաքական առաջընթացով՝ ՀՀ հանրակրթական դպրոցի միջին օղակի մայրենիի ծրագրի, դասագրքերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների, մեթոդական համալիրի և ուսուցման միջոցների ու ձևերի արդիականացումը, առաջավոր փորձի ուսումնասիրումը, տարածումն ու ներդրումը հրամայական պահանջ են:

3. Հանրակրթական դպրոցի միջին օղակում սովորողների բանավոր խոսքի զարգացման գործընթացի արդյունավետությունը կապահովվի ոչ միայն մայրենիի դասերի ընթացքում այդ առարկայի ծրագրով նախատեսված աշխատանքների համալիրի մեթոդապես ճիշտ իրականացմամբ, այլև կրթության այդ օղակում դասավանդվող բոլոր առարկաների դասերին սովորողների՝ կապակցված խոսք կառուցելու կարողությանը տրված տեղով:

4. Մայրենիի և հարակից առարկաների դասերի ընթացքում հանրակրթական դպրոցի միջին օղակի աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը միտված մեր մշակած և արդյունավետությունը փորձարարությամբ հիմնավորված վարժությունների համալիրը, դրանց կիրառման արդյունավետությանը նպաստող գիտամեթոդական երաշխավորությունները լիովին կնպաստեն դպրոցականների բանավոր խոսքի զարգացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապացուցվում են հիմնախնդրին առնչվող ստվարաձավալ մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ, համակարգային և վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, հետազոտվողների խմբի բավարար քանակով, մանկավարժական փորձից կուտակված փաստացի նյութերի մշակմամբ, ստացված արդյունքների ներդրմամբ:

Հետազոտության բազան, փորձաքննությունն ու ներդրումն իրականացրել ենք Վանաձորի Ռաֆֆու անվան հմ. 19 և Լոռու մարզի Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան հիմնական դպրոցներում: Հետազոտության ընթացքի և արդյունքների մասին հաղորդումներով հանդես ենք եկել ՀՊՄՀ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, գիտաժողովներում և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից երաշխավորված ամսագրերում:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 190 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Ներկայացված են նաև հետազոտության իրականացման փուլերը:

Ատենախոսության առաջին՝ **«Բանավոր խոսքի զարգացումը որպես աշակերտների մտածողության և աշխարհայացքի ձևավորման գործոն»** վերնագրով գլխում քննարկվել են հետևյալ խնդիրները՝

- Խոսքի զարգացման տեսության պատմական ակնարկ,
- Խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցում,
- Խոսքի զարգացումը որպես աշակերտների աշխարհայացքի ձևավորման պայման:

Ատենախոսության առաջին գլխում հիմնավորվել է խոսքի կարևոր գործոն լինելը, որի շնորհիվ կատարվում է մտքերի փոխանակություն՝ սեփական մտքերի արտահայտում և ուրիշների մտքերի հասկացում ու յուրացում, նշվել է, որ այն, հասարակական գործոն լինելով, հասարակության մեջ իրականացնում է հաղորդակցում, մարդկության՝ անցյալի ու ներկայի քաղաքակրթության նվաճումների և փորձի, տվյալ սերնդի հոգևոր մշակույթի փոխանցում: Վերլուծվել է բանավոր խոսքի զարգացման գործընթացի պատմական ընթացքը անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը: Անդրադարձ է կատարվել ՀՀ հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներին և ծրագրերին՝ կարևորելով հիմնական դպրոցում դասավանդվող բոլոր ուսումնական առարկաների դերը աշակերտների բանավոր խոսքի զարգացման գործընթացում: Հիմնավորվել է, որ 5-9-րդ դասարանների դասագրքերում զետեղված ուսումնական նյութերի շուրջ աշխատանքի մեթոդապես ճիշտ կազմակերպումը կարող է նպաստել աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը: Բացահայտվել են բանավոր խոսքի զարգացման գործընթացին նպաստող բաղադրիչները՝ ընդգծելով այդ գործընթացի կարևորությունն անձի աշխարհայացքի և արժեհամակարգի ձևավորման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Խոսքի տեսակները. սովորողների՝ խոսքի տարբեր տեսակներով արտահայտվելու կարողության զարգացման մեթոդները»** խորագրով գլխում դիտարկվել են հետևյալ խնդիրները՝

- Ներքին և արտաքին խոսք. ներքին խոսքը որպես արտաքին խոսքի դրսևորման նախադրյալ,
- Բանավոր խոսք. դրա զարգացման մեթոդները,

• Երկխոսություն և մենախոսություն կառուցելու կարողությունների ձևավորումը որպես բանավոր խոսքի զարգացման միջոց:

Մասնավորապես դիտարկվել է խոսքն իր տարբեր դրսևորումներով ու տարատեսակներով, առանձնահատկություններով, ընդգծվել աշակերտների խոսքի զարգացման գործընթացում դրանց ուսուցման կարևորությունը: Խոսքի տեսակների ուսուցման գործընթացն առավել նպատակային և արդյունավետ կազմակերպելու, աշակերտի լեզվամտածելու կարողություն ձևավորելու, տարբեր կարողունակություններ մշակելու նպատակով առաջարկվել են այնպիսի բաշխիչ նյութեր, որոնց շնորհիվ աշակերտները կկարողանան ոչ միայն նայել կամ լսել, այլև տեսնել, ընկալել երևույթը, սեփականացնել այն, արտահայտել կապակցված խոսքով՝ ձեռք բերելով խոսքի բարեկիրթ մշակույթ: Հիմնավորվել է սովորողների բանավոր խոսքի զարգացման նպատակով դպրոցում խոսքի միասնական պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը՝ այն դարձնելով դասավանդող բոլոր ուսուցիչների և մանկավարժական հանրության հոգածության առարկան: Այդ նպատակով պետք է հետևողական աշխատանք իրականացնել, որպեսզի աշակերտները բոլոր դասերին, դասամիջոցներին, դպրոցից դուրս, տանը խոսեն մաքուր ու գրական հայերենով: Միայն այս ճանապարհով ճիշտ, գրագետ, գեղեցիկ ու արտահայտիչ խոսքը նրանց համար կդառնա հմտություն, քանի որ յուրաքանչյուր երեխա դաստիարակվում է կրթվածության տարբեր մակարդակ ունեցող ընտանիքում, և դպրոցը, բարեկիրթ ու գրագետ սերունդ դաստիարակելուց զատ, իր վրա է վերցնում նաև աշակերտների դաստիարակության, հոգեկերտվածքի ձևավորման պարտականությունը: Այսինքն՝ սովորողների դաստիարակությունն իրականացվում է հոգու հետ միասին. դաստիարակվում է ամբողջական մարդը:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել է նաև վարժությունների համակարգ՝ միտված սովորողների բանավոր խոսքի զարգացմանը երկխոսություններ, մենախոսություններ կազմելու միջոցով: Անդրադառնալով բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստող երկխոսության տեսակներից բանավեճի կարևորությանը՝ հիմնավորվել է, որ այն կենտրոնական տեղ ունի ժամանակակից դիդակտիկայում: Փորձարարությամբ հիմնավորվել է, որ զրույց-բանավեճի ընթացքում մասնակիցների կողմից նույն երևույթի վերաբերյալ տարբեր տեսակետներ հայտնելու միջոցով զարգանում են բանավիճող կողմերի մտորումները, համոզմունքները, գնահատումները, դատողությունները ներկայացնելու ունակությունը, ձեռք են բերում նաև ուրիշների հետ բարեկիրթ հաղորդակցվելու կարողություններ:

Ատենախոսության երրորդ՝ «**Բանավոր խոսքի զարգացման մեթոդական համակարգը**» խորագրով գլխում դիտարկվել են հետևյալ խնդիրները՝

• Խոսքի զարգացման մեթոդական համակարգը մայրենիի դասագործընթացում,

• Խոսքի զարգացման գիտամեթոդական հիմքերը մայրենի լեզվի դասագործընթացում,

• Միջառարկայական կապերը՝ որպես սովորողների բառապաշարի

հարստացման և բանավոր խոսքի զարգացման միջոց,

- Խոսքի զարգացման գործընթացի հաջորդայնության ապահովումը տարրականից միջին դպրոց անցման շրջափուլում,
- Հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Անդրադառնալով մայրենիի դասերին միջառարկայական կապերի ապահովմանը՝ ընգծվել է, որ մայրենի լեզուն ունի կենտրոնական դեր ու նշանակություն. նրա միջոցով է իրականացվում ճանաչողական գործընթացը: Ուսումնական այլ առարկաների ուսումնասիրության ընթացքում աշակերտների ինտելեկտի, մտածողության, գիտակցության զարգացումը, նրանց մեջ համամարդկային արժեքների դաստիարակումն իրականացվում է մայրենի լեզվի միջոցով: Եվ որպեսզի կրթենք ու դաստիարակենք մարդկային բարձր արժեհամակարգ, լայն մտահորիզոն ունեցող մտածող և գիտակից սերունդներ, հետևաբար նաև խոսք կառուցելու և հաղորդակցվելու կարողություններ, անհրաժեշտ է սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները բոլոր դասերին և դրանց յուրաքանչյուր փուլում: Այս գլխում դիտարկել ենք նաև այն համոզմունքը, որ դպրոցական բոլոր առարկաներն իրենց շրջանակներում նախատեսված գիտելիքների և կարողությունների միջոցով նպաստում են աշակերտի գիտակցության մեջ աշխարհի ամբողջական պատկերը կառուցելուն, իսկ աշակերտներն էլ իրենց հերթին, սովորելով ուսումնական առարկաները և համադրելով ստացած գիտելիք–պատկերները միմյանց հետ, ամրապնդում և սեփականացնում են դրանք՝ կազմելով աշխարհի վերաբերյալ սեփական պատկերացումը:

Սովորողների գիտակցության մեջ պիտի ամրակայվի այն համոզմունքը, որ խոսքի միջոցով հնարավոր է որոշել մարդու մտավոր մակարդակը: Կիրթ ու գրագետ մարդն իր մտքերն արտահայտում է պարզ, հասկանալի, սահուն, արտահայտիչ և տրամաբանական ճիշտ կառուցվածքով: Կարևորվել է նաև աշակերտների բանավոր խոսքի զարգացման գործընթացի արդյունավետության հարցում ուսուցման մեթոդների ճիշտ դասակարգման, դրանց տեղին ընտրության և կիրառման, աշակերտների խոսքի զարգացման գործընթացը ճիշտ ընթացքով տանելու կարողությունը: Հիմնավորվել է, որ ուսուցման ցանկացած մեթոդ ներկայացնում է ուսուցչի գործունեության նպատակաուղղված համակարգ, որը կազմակերպում է սովորողների ճանաչողական և պրակտիկ գործունեությունը՝ նպատակ ունենալով ապահովել կրթության բովանդակության յուրացումը աշակերտների կողմից: Այս գլխում քննարկել ենք նաև ուսուցման մեթոդների հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու ուսուցչի մասնագիտական ձեռնհասությունը, ինչը հնարավոր է մասնագիտական լուրջ կարողունակություններ, փորձառություն, նաև անձնային որոշակի որակներ ունենալու դեպքում: Մեր ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպելիս ուսուցման մեթոդների և մեթոդական հնարների ընտրության և կիրառման ժամանակ ուսուցիչը կիրառում է

տրամաբանական մտահանգման ձևեր ու եղանակներ, և եթե աշակերտը չունենա բավարար մտավոր կարողություններ, ապա նա չի կարողանա տիրապետել մայրենի լեզվին, սովորել նրա քերականությունն ու ուղղախոսությունը: Հենց այստեղ է խոսքի զարգացման մեթոդիկան հենվում տրամաբանության վրա՝ խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպելիս ուսուցիչին մղելով լեզվական այնպիսի առաջադրանքների և հարցերի ձևակերպման, որ աշակերտները, պատասխանի ժամանակ ապահովելով լեզվական գիտելիքներն ուսումնասիրելու վերլուծական-համադրական մոտեցում, իրենց պատասխաններում դրսևորեն նաև մտավոր ակտիվ գործունեություն:

Այս գլխում Մ. Կորյունի «Այգեպան Մոսին» հեքիաթի օրինակով ներկայացված են աշակերտների բառապաշարի հարստացմանը և խոսքի զարգացմանը նպաստող կառուցողական կրթության մի քանի մեթոդներ:

Մշակվել և փորձարկվել են առաջադրանքներ սովորողների ոչ գործուն բառապաշարը ակտիվացնելու նպատակով, որոնց կատարման ընթացքում աշակերտների միտքը դառնում է ճկուն, զարգանում է արագ կողմնորոշվելու կարողությունը, բառի ճշգրիտ և տեղին ընտրությունը: Աշակերտների պասիվ բառապաշարի ակտիվացման մակարդակի բացահայտման մեթոդական հնարի իրականացման արդյունքում գրանցել ենք հետևյալ արդյունքները.

Տրամագիր 1



Անառարկելի է, որ մարդու բառապաշարը հարստանում է աստիճանաբար, երեխայի դեպքում ևս. կենսափորձի հարստացմանը զուգահեռ՝ բառապաշարը հարստանում է և դառնում աշակերտի սեփականությունը: Աշակերտների մեջ ձևավորված համոզմունքները խթանում են դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության ձևավորումը, համարձակ և դիպուկ մտքերով սեփական տեսակետերի ու մոտեցումների ներկայացումը:

Ատենախոսության երրորդ գլխում անդրադարձ է կատարվել նաև սովորողների խոսքի զարգացման հաջորդայնության ապահովման սկզբունքին. խոսքի զարգացման աշխատանքներն սկսում են դեռևս նախադպրոցական տարիքից, շարունակվում են տարրական դասարաններում՝ աշակերտների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության, ուղղախոսության, տրամաբանության զարգացման, աշխարհայացքի և այլ բարոյակամային որակների ձևավորման խնդիրների շուրջ՝ ապահովելով որոշակի կրթական մակարդակ միջին դպրոցում խոսքի զարգացման աշխատանքներն

արդյունավետ շարունակելու նպատակով: Հայտնի է, որ աշակերտը տարբեր առարկաներից օրական ունենում է 5-7 դասաժամ, և դրանցից յուրաքանչյուրի ժամին հնարավոր է զարգացնել գրագետ խոսքի հմտություններ, մտքերը կանոնավոր ու հստակ ձևակերպելու և արտահայտելու կարողություններ: Սովորաբար ուսումնառության նախնական փուլում խոսքի զարգացման աշխատանքներն սկսվում են բառապաշարի հարստացմամբ: Յուրաքանչյուր նոր դասի ընթացքում գիտելիքների և կենսափորձի հարստացմանը զուգահեռ հարստանում է նաև աշակերտի բառապաշարը, որը կարևոր փուլ է նրա խոսքի զարգացման համար: Այդ նպատակով մենք առաջարկել ենք «մտապահարան»-ի կառուցման գաղափարը: Բառապաշարի պարբերաբար հարստացման ընթացքում աշակերտների գիտակցության մեջ կառուցվում է մի «մտապահարան», որի համապատասխան «դարակներում» աստիճանաբար «տեղավորվում են» բառերը: Աշակերտներն իրենց խոսքը կառուցելու համար համապատասխան «դարակներից» ընտրում են անհրաժեշտ բառերը, որոնց միջոցով հստակորեն արտահայտում են իրենց միտքը: Բնականաբար, որքան հարուստ լինի աշակերտի «մտապահարանը», այնքան առատ բառանյութ կունենա կառուցված խոսքը, այնքան հեշտ կիրականցվի հաղորդակցումը, նրա խոսքը կլինի հարուստ, բովանդակալից, հիմնավոր և համոզիչ: Ուսումնասիրելով այս աշխատանքային գործընթացն ու արդյունքները՝ մենք մշակել և փորձարկել ենք աշակերտների բառապաշարի հարստացմանն ու տրամաբանական խոսք կառուցելու կարողության զարգացմանը նպաստող վարժությունների համակարգ, որի բաղադրիչներից յուրաքանչյուրը վերաբերում է մայրենիի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերին: Սրանց կատարման ընթացքում աշակերտները ձեռք են բերում բարեկիրթ խոսքի մշակույթ, յուրացնում են և կիրառում ուղղախոսության կանոնները, սովորում են կառուցել գնահատող և դատողական խոսք:

Բառապաշարի հարստացման գործընթացը համարելով խոսքի զարգացման հիմնաքար՝ մենք մշակել և փորձարկել ենք «**Խոսքի զարգացման քայլաշարային մեթոդը**», որի կիրառման արդյունքում արձանագրվել է դրական շարժընթաց և հավանության է արժանացել պարապող ուսուցիչների կողմից: Հետազոտության արձանագրման փուլն իրականացրել ենք 2020-2021, 2021-2023 ուսումնական տարիների ընթացքում Վանաձորի Ռաֆֆու անվան հմ. 19 և Լոռու մարզի Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան հիմնական դպրոցների 6-րդ դասարաններում: Հետազոտությանը մասնակցել է 75 աշակերտ (50 աշակերտ փորձարարական և 25-ը՝ ստուգողական խմբերում): Այս ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ նշված մեթոդի՝ որոշակիորեն համակարգված քայլաշարերն առավել արդյունավետ են աշակերտների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման աշխատանքների դրական արդյունքի ապահովման համար: Նշենք, որ սկզբում գործընթացը դանդաղ էր զարգանում, սակայն աստիճանաբար հենց աշակերտներն ինքնավերահսկման ճանապարհով կարգավորեցին ոչ միայն իրենց բառապաշարը, խոսքը, այլ նաև սկսեցին ուշադրություն դարձնել դիմացինի խոսքին, ուղղել խոսքային

«սայթաքումները», բառերը կիրառել տեղին և ճիշտ՝ գիտակցաբար ընկալելով խոսք կառուցելու գործընթացում հարուստ բառապաշարի դերն ու նշանակությունը:

Ուսումնասիրության հիմնախնդրի շրջանակներում ցանկալի արդյունքի հասնելու համար մեր մշակած խոսքի զարգացման «Քայլաշարային մեթոդի» առաջին քայլն սկսեցինք իրականացնել 6-րդ դասարանում ուսումնասիրվող բոլոր առարկաների եզրույթների յուրացմամբ և հավաքագրմամբ: Այնուհետև այդ բառերն ընդգրկեցինք գործնական աշխատանքներում՝ կատարելով համապատասխան վարժություններ: Աշխատանքի արդյունքում այդ բառերն աշակերտների ակտիվ բառապաշարում ամրապնդվեցին, զարգացավ նրանց խոսքը: Այս գլխում ներկայացրել ենք մեր մշակած քայլերը, որոնց կատարման ընթացքում աստիճանաբար նկատել ենք որոշակի առաջընթաց աշակերտների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման ուղղությամբ:

Քայլ 1

Ձևավորել գրպանիկներով պատի թերթ (դպրոցի հնարավորության սահմաններում ցանկալի է բառերը հավաքել էլեկտրոնային հարթակում), որի վրա գրված կլինեն աշակերտների անունները: Աշակերտներին հանձնարարվում է ամեն օր գրել և համապատասխան գրպանիկներում հավաքել բոլոր առարկաների դասաժամերին տվյալ օրվա ընթացքում սովորած բառերն ու եզրույթները (մոտ 1 ամիս):

Ամփոփել, թե մեկ ամսվա ընթացքում քանի՛ բառով է հարստացել աշակերտների բառապաշարը:

Քայլ 2

Ստուգելու համար, թե սովորած բառերը որքանո՛վ են ամրապնդվել աշակերտների ակտիվ բառապաշարում, արդյոք այդ բառերը սովորե՞լ են գիտակցված, և դրանք աշակերտների բառապաշարի հաստատուն մա՞սն են կազմում, հանձնարարվեց 5 րոպեի ընթացքում սովորած բառերը խմբավորելով՝ գրել տվյալ սյունակում:

Աղյուսակ 1

Գոյականներ (առարկա ցույց տվող բառեր)	Ածականներ (հատկանիշ ցույց տվող բառեր)	Բայեր (գործողություն ցույց տվող բառեր)

Հանձնարարվում է բառերը խմբավորել, որպեսզի պարզ լինի, որ «մեր մտածողության նյութ կազմող բոլոր պատկերացումների և նրանց արտահայտիչ բառերի այս երեք խմբերը լեզվի մեջ ամենակարևոր տեղն են գրավում. մենք ամենավաղ հասակից վարժվում ենք մեր պատկերացումները դնել այս երեք խմբերից մեկի մեջ, և այդ հնարավորություն է տալիս մեզ…սովորելու և խոսելու»[1]:

[1] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, էջ 28:

Քայլ 3

Արկղիկի մեջ լցնել ուսումնառության որոշակի ժամանակահատվածում միջառարկայական կապերի շրջանակներում սովորած եզրույթները, հասկացությունները, երևույթներ արտահայտող բառերը: Աշակերտներին հանձնարարվում է արկղիկից հանել մեկ բառ և հակիրճ մեկնաբանել տվյալ բառի իմաստը, խոսել այդ բառը ներկայացնող երևույթի, առարկայի մասին: Ուսումնական այս նյութի յուրացման մակարդակը ստուգելու նպատակով առաջադրանքը կարելի է կատարել նաև գրավոր՝ հանձնարարելով տրված բառախմբով ներկայացնել կապակցված խոսք:

Քայլ 4

Հանձնարարել գրել կապակցված խոսք տրված բառախմբով՝ ընդգրկելով սովորած բառերը:

Քայլ 5

Կարդալ առաջադրված փոքրածավալ բնագրեր, գեղարվեստական ստեղծագործություններից հատվածներ, գիտահանրամատչելի և տեղեկատվական նյութեր, ապա վերարտադրել՝ հավատարիմ մնալով բնագրին:

Այս ընթացքում իրականացվող գործնական աշխատանքներին զուգահեռ՝ աշակերտները պետք է շարունակեն գրպանիկներում տեղադրել նոր սովորած բառերը և դրանք անընդհատ դնեն շրջանառության մեջ: Արդյունքներն ամփոփելիս պարզ կդառնա, թե փորձաշրջանում որքան բառ է մտել աշակերտների պասիվ բառապաշար, դրանցից քանիսն են կիրառվել և ամրապնդվել ակտիվ բառապաշարում: Բառերի ու եզրույթների մտապահումը պետք է լինի ոչ թե մեխանիկական հիշողության վրա հիմնված, այլ աշակերտների կողմից գիտակցորեն յուրացված:

Մենք մեր աշխատանքի ընթացքում մշտապես առաջնային ենք համարում բառարանային մշակույթը, բառապաշարի հարստացումը, որովհետև հայերենը հարուստ է ոսկե բառաֆոնդով, որը կյանքի, գիտության, գրականության վերաբերյալ մեր ունեցած խոր ու բազմակողմանի գիտելիքների արդյունքն է: Մեր մանկավարժական փորձի և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ աշակերտների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները պետք է իրականացնել պարուրաձև սկզբունքով՝ պարբերաբար ավելացնելով նորը, որովհետև դպրոցականների լեզվական մտածողությունը ձևավորվում է շրջապատող իրականության փոխգործակցության, փոխներգործության արդյունքում, երբ որևէ առարկա, իրադարձություն կամ երևույթ արտահայտող բառն առաջացնում է մտածողության որոշակի ձև, մտապատկեր, որը նպաստում է ոչ միայն բառիմաստի ընկալմանը, այլ նաև ինչ-որ մտքի իմաստի ձևավորմանը:

Ատենախոսության այս գլխում ներկայացրել ենք մեր մշակած «Քայլաշարային մեթոդի» կիրառումից հետո բառապաշարի հարստացման միջոցով աշակերտների խոսքի զարգացմանը միտված աշխատանքների արդյունավետության մակարդակները:

Միավորելով ամփոփիչ փուլում արձանագրած տվյալները՝ ստացել ենք հետևյալ արդյունքները.

Աղյուսակ 2

Բառապաշարի հարստացման ցուցանիշները	Փորձարարական դասարան				Ստուգողական դասարան			
	Արձանագրման փուլ		Ամփոփիչ փուլ		Արձանագրման փուլ		Ամփոփիչ փուլ	
	28 աշակերտ	%	28 աշակերտ	%	26 աշակերտ	%	26 աշակերտ	%
Շատ բարձր	4	14.3	5	17.9	3	11.5	3	11.5
Բարձր	6	21.5	9	32.1	5	19.2	6	23
Միջին	17	60.7	13	46.4	15	57.7	14	53.9
Ցածր	1	3.5	1	3.6	3	11.6	3	11.6

Աշակերտների բառապաշարի հարստացման շարժընթացը ողջ դասարանի կտրվածքով:

Աղյուսակ 3

	Քայլ 1	Քայլ 2	Աճի տեմպ (%)	Վերջնարդյունքը			
				0-25 %	26 - 50%	51 - 75%	76-100%
1 ամսվա ընթացքում սովորած բառերի քանակը	663 բառ	431 բառ	65	3 աշակերտ	15 աշակերտ	6 աշակերտ	3 աշակերտ
Միջինը յուրաքանչյուր աշակերտի համեմատությամբ	25 բառ (24,5)	16 բառ (15,9)	64	11	56	22	11

Ամփոփիչ տվյալների տրամագիրը



Այսպիսով՝ մեր իրականացրած ուսումնասիրությունների և մեր մանկավարժական փորձի արդյունքում հանգել ենք այն համոզման, որ ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է հաշվի առնել, որ սովորողը գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը զուգահեռ կուտակում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում զարգանում են նրա հոգեկան գործընթացները, նա ոչ միայն գիտելիք է ձեռք բերում, այլև ձևավորվում են այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորման ունակություն: Այս ամենը նա պիտի ներկայացնի գրագետ, տրամաբանական ամբողջություն ներկայացնող խոսքով՝ պահպանելով ուղղախոսության կանոնները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հիմնախնդրի շուրջ իրականացրած ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Ուսումնասիրելով ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանական, մանկավարժամեթոդական, հոգեբանական գրականության մեջ խոսքի զարգացման գործընթացին վերաբերող ավանդական և ժամանակակից մոտեցումները՝ մենք բացահայտեցինք, որ հանրակրթական դպրոցի միջին դասարաններում սովորողների բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ հայալեզու ուսումնասիրություններում ըստ ամենայնի անդրադարձ չկա այդ կարևոր խնդրին, թեև հիմնախնդիրը մշտապես եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում:

2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ հանրակրթական դպրոցի միջին օղակի մայրենիի ծրագրում թեև նախատեսված են սովորողների խոսքի զարգացման խնդիրներ, սակայն ոչ միշտ են մայրենիի դասերի ժամանակ կարևորվում սովորողների բառապաշարի հարստացումն ու խոսքի

զարգացումը: Կրթության այս օղակի ուսուցիչների համար կազմակեպվող վերապատրաստման դասընթացներում գրեթե չեն անդրադառնում այս կարևոր հիմնախնդրին, իսկ հայալեզու մեթոդական գրականությունն այս իմաստով հարուստ չէ անհարժեշտ մեթոդական երաշխավորություններով:

3. Մեր մշակած և փորձարկած վարժությունների համակարգն ու նմանատիպ վարժությունների այլ համալիրները կբարձրացնեն հանրակրթական դպրոցի միջին օղակում սովորողների կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը:

4. Սովորողների խոսքի զարգացման հիմնախնդիրը արդյունավետորեն լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մայրենի լեզվին ու գրականությանը սերտորեն առնչվող դպրոցում դասավանդվող մյուս առարկաները, ինչպես նաև ոճագիտության և գրականագիտության, տրամաբանության ու մանկավարժության, հոգեբանության ու տարիքային ֆիզիոլոգիայի ընձեռած հնարավորություններն ու տվյալները: Հանրակրթական հիմնական դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաներին առնչվող եզրույթների հավաքագրմամբ և յուրացմամբ, նրանց շուրջ տարատեսակ վարժությունների համակարգի կատարմամբ հնարավոր է դրանք ամրապնդել աշակերտների ակտիվ բառապաշարում և ակտիվացնել նրանց գործածումը կապակցված խոսքում:

5. Աշակերտների կապակցված խոսքի զարգացման գործընթացը գիտականորեն պատշաճ մակարդակով կազմակերպելու համար նրանք պետք է տիրապետեն լեզվաբանական կայուն գիտելիքների, ունենան դրանց առնչակից գիտությունների բավարար իմացություն: Այդ գործընթացում ուսուցիչը պիտի դրսևորի ոչ միայն ուսուցման սկզբունքներն ու մեթոդները գործադրելու կարողականություն, այլ նաև իմանա տարրական դասարաններում աշակերտների ձեռք բերած բառապաշարը, 5-9-րդ դասարանների աշակերտների տարիքային առանձնահատկությունները, և դրանք՝ որպես հենք, օգտագործի հետագա աշխատանքներում:

6. Աշակերտի խոսքի զարգացումն իր կրթադաստիարակչական մեծ նշանակությամբ պետք է մտահոգի ոչ միայն մայրենիի, այլև դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների ուսուցիչներին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հատկապես գիտական եզրույթների հետևողական յուրացմանը և դրանց տեղին կիրառմանը: Եզրույթների հիմնավոր յուրացումը ուսումնական տվյալ առարկայի բովանդակության ամբողջական ըմբռնումից բացի՝ հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում դրանց միջոցով խոսքը դարձնել դիպուկ, գիտական և ճշգրիտ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Խաչատրյան Հ, Խոսքի զարգացումը որպես աշակերտի աշխարհայացքի ձևավորման պայման, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, 2017, էջ 312-319:

2. Խաչատրյան Հ., Ներքին խոսքի կառուցման հմտությունների

ձևավորումը միջին դպրոցում, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՊՄՀ հիմնադրման 95-ամյակին, 2018, էջ 42-50:

3. Խաչատրյան Հ., Խոսքի զարգացման մեթոդական հնարները միջին դպրոցում, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես» ամսագիր, 2018, էջ 138-147:

4. Խաչատրյան Հ., Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարաններում՝ որպես միջին դասարանների աշակերտների խոսքի զարգացման նախապայման, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, 2018, էջ 298-306:

5. Խաչատրյան Հ., Դարձվածքների ուսուցումը որպես աշակերտների բառապաշարի հարստացման միջոց, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա 2, 2019, էջ 206-218:

6. Խաչատրյան Հ., Խոսքի զարգացման փոխհաջորդման սկզբունքը տարրական և միջին դասարաններում, ՎՊՀ 50-ամյակին և Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2019, էջ 473-482:

7. Խաչատրյան Հ., Միջառարկայական կապը խոսքի զարգացման գործընթացում, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2020, էջ 133-142:

8. Խաչատրյան Հ., Բանավոր խոսքի զարգացման քայլաշարային մեթոդի կիրառում միջին դպրոցում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, «Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում» գիտական նախագծի շրջանակում կազմակերպված գիտաժողով, 2021, էջ 117–127:

9. Խաչատրյան Հ., Եդոյան Ա., Հարությունյան Ն.,Դպրոցում բառ-տերմինների համակողմանի ուսուցումը՝որպես աշակերտի բառապաշարի հարստացման միջոց, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր, Հումանիտար գիտություններ №-1 (43), 2022, էջ 64–77:

10. Խաչատրյան Հ., Բանավոր խոսքի զարգացման մանկավարժական հիմքերը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, N 3 (62), Երևան, 2023, էջ 175-185:

ХАЧАТРЯН АСМИК АРАМОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ УСТНОЙ РЕЧИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

На соискание ученой степени кандидата педагогических наук по специальности «Методика преподавания и обучения (армянский язык)» - 13.00.02

Защита диссертации состоится 6-го июня 2024 г. в 12:00 на заседании специализированного совета 020 «Педагогика» Комитета по высшему образованию и науке Республики Армения действующего в Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Т. Меца 17

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Одной из основных проблем учебнойпрограммы по родному языку в среднемзвенеобщеобразовательной школы является развитие устной и письменной речи учащихся, формирование творческих и коммуникативных способностей, навыков сотрудничества и т.д. Эти способности, безусловно, формируются в процессе преподавания всех предметов средней школы, однако работа по решению указанной проблемы осуществляется преимущественно в процессе обучения родному языку.Полноценное изучение всех компонентов учебной программы по родному языку создает достаточную базу для развития умений учащихся строить грамотную письменную и устную речь. Родной язык в ряду всех изучаемых предметов общеобразовательной системы имеет центральное место в учебно-воспитательной деятельности, формировании нравственно-аксиологической системы учащихся, а также в развитии психических процессов, которые в основном осуществляются посредством родного языка. Однако наши наблюдения показывают, что в среднем звене общеобразовательной школы в процессе изучения родного языка не всегда решаются проблемы развития речи учащихся. Это обстоятельство мы обосновываем главным образом не ограниченным местом и ролью, отведенной речевому развитию учащихся в стандартах общеобразовательной школы и в программе по родному языку, а несовершенством методической системы, направленной на решение этой проблемы в образовательном процессе.

Цель исследования. На базе комплексной дисциплины по армянскому языку в среднем звене основной общеобразовательной школы РА осуществляются реализация работ с сочетанием традиционных и современных технологий, направленных на развитие речи учащихся, а также разработка современного учебно-методического комплекса по основной проблеме.

Объект исследования. Процесс реализации работ, направленных на развитие речи учащихся основной общеобразовательной школы РА.

Предмет исследования. Разработка комплекса эффективных методов и способов, направленных на развитие речи учащихся основной общеобразовательной школы РА.

Научная гипотеза исследования. На средней ступени основной школы уровень развития устной речи учащихся будет полноценным:

а. если эта проблема станет целью не только родного языка, но и преподаваемых в школе всех предметов и всего педагогического коллектива;

б. если будет разработана и внедрена общая и единая система методов по развитию речи при наличии педагогических условий, способствующих эффективности решения этой проблемы;

в. если в процессе обучения будут активизированы познавательные интересы учащихся и разработаны основанные на знании методические приемы, направленные на их соответствие.

Задачи исследования.

1. Рассмотреть научно-теоретические основы методики развития речи учащихся основной общеобразовательной школы; изучить основные принципы подходов к традиционным и современным методам, способствующих формированию у учащихся умения строить связную речь, в лингвистической, педагогической и психологической литературе.

2. Изучить постановку задачи в среднем звене общеобразовательной школы РА, раскрыть существующие проблемы и их причины.

3. Разработать, внедрить и апробировать в основной общеобразовательной школе РА ученикоцентричную методическую систему, содействующую развитию устной речи учащихся, а также комплекс прикладных упражнений.

4. На основе эксперимента и результатов статистического анализа проверить и оценить эффективность предлагаемой методической системы, способствующей формированию умений учащихся строить грамотную устную речь.

5. С точки зрения цели и задач исследования осуществить анализ статистических результатов экспериментальных работ, предложить соответствующие рекомендации.

Теоретическая значимость исследования

1. Были уточнены лингвистические, психологические, педагогические и методические принципы, способствующие развитию речи учащихся, и их учет в процессе обучения родного языка, а также других предметов, преподаваемых в средней школе.

2. Был представлен принцип последовательности этапов процесса развития устной речи учащихся в младшем и среднем общеобразовательных звеньях обучения в качестве систематизированного процесса развития речи.

3. Был разработан, апробирован и представлен практический комплекс, способствующий развитию устной речи учащихся средней школы.

Практическая значимость исследования. Система разработанных и апробированных упражнений и содержание его методического комплекса соответствует требованиям предметного стандарта: она будет способствовать обогащению лексики учащихся средней школы, может быть применена в средней школе как в процессе преподавания родного языка, так и других предметов. Система может быть полезна как учителям, методистам, будущим педагогам, так и разработчикам образовательной политики.

Основные этапы исследования. Исследование проводилось в 3 этапа с 2016 по 2023 гг.

На защиту выносятся следующие положения:

1. Изучение учебного материала, предусмотренного стандартами родного языка и предметной программой среднего звена общеобразовательной школы РА, внедрение современного методического комплекса являются достаточной предпосылкой для развития устной речи учащихся.

2. Актуализация программ, учебников, учебных пособий, методического комплекса по родному языку, средств и форм обучения, изучение,

распространение и внедрение передового опыта, обусловленного возрастными, акселерационными, психолого-педагогическими особенностями учащихся средней школы, их познавательными интересами, своеобразными формами их удовлетворения и постепенными изменениями, общественно-политическим прогрессом, являясь императивным требованием времени.

3. Эффективность процесса развития устной речи учащихся в среднем звене общеобразовательной школы будут обеспечены реализацией комплекса работ, предусмотренных программой данного предмета не только на уроках родного языка, но и с учетом способностей учащихся строить связную речь на занятиях по всем предметам этого звена обучения.

4. Разработанный нами комплекс упражнений, направленный на развитие устной речи учащихся среднего звена общеобразовательной школы на уроках родного языка и смежных дисциплин, результативность которых подтверждена экспериментальным путем, а также научно-методическое обеспечение, направленное на эффективность их применения, полностью будут способствовать развитию устной речи учащихся.

Структура и объем работы. Диссертация состоит из Введения, трех глав, Заключения, Списка использованной литературы и Приложений. Общий объем работы составляет 190 страниц текста компьютерной верстки.

HASMIK A. KHACHATRYAN

ORAL SPEECH DEVELOPMENT PROBLEM IN SECONDARY SCHOOLS

The thesis submitted for applying for the scientific degree of Candidate of Pedagogical Sciences (PhD), speciality 13.00.02 – "Teaching and Education Methodology (the Armenian Language)".
The defence of the thesis will be held at the session of Professional Council"Pedagogy" 020of the Higher Education and Science Committeeof the Republic of Armenia at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on June 6, 2024,at 12:00.
Address: 0010, Yerevan, 17, Tigran Mets

SUMMARY

Relevance of the research topic: One of the important issues of the subject program at the middle level of public school is the development of student's oral and written speech, creativity, and the formation of communicative and cooperative abilities. Of course, the abovementioned abilities are formed in the classes of all subjects taught in middle school, but the work carried out in the direction of solving the problem is mainly emphasized in the teaching process of the mother tongue. A full study of all components of the mother tongue creates a sufficient basis for the development of students' ability to build literate written and oral speech skills. The mother tongue has a central role in all the subjects studied withinschool education, for it is mainly through this factor that the educational activities of students, the formation of the moral value system, and the development of mental processes proceed.However, our studies have shown that the process of studying the mother tongue in

the field of public education does not always fully serve the development of students' speech. We justify this circumstance not by the imperfection ofthe role given to the development of speech in the mother tongue program of the public school but by the imperfection of the methodological system aimed at solving this problem in the educational process.

The aim of the research is to implement the work aimed at the development of the student's speech, which is carried out by combining traditional and modern technologies and the development of a new educational methodical complex about the problem.

The researchobject is the process of implementation of work aimed at the development of speech of the students of the public education secondary school of the Republic of Armenia.

The research subjectis the development of a complex of effective methods and means aimed at the development of the speech of the students of the secondary schools of the Republic of Armenia.

The hypothesis of the research: The level of students' oral speech development in the middle level of secondary school will be complete if:

a. the problem grows not only into the mother tongue teaching/learning aim but also the goal of all school subjects and the entire pedagogical staff;

b. a general and united system of learners' speech development methods is to be developed and implemented at school along with such pedagogical pre-settings that contribute to the efficiency of solving that very problem;

c. in students' learning process and cognitive interests are activated, and knowledge-based methodological skills are to be developed to satisfy them.

Research objectives: Related to the main aim of the research and the hypothesis, we set the following objectives:

1. To observe the scientific and theoretical foundations of the speech development methodology of the students in secondary public school, to study the discussion of traditional and modern methods contributing to the formation of students' ability to build connected speech in linguistic, pedagogical and psychological literature.

2. To study the situation of the problem in the middle level of the public schools of the Republic of Armenia to identify the causes of the current situation.

3. To develop, invest and test a methodical system and a complex of applied exercises that contribute to the development of students' oral speech in the RA public secondary school.

4. To check and evaluate the effectiveness of the proposed methodological system contributing to the formation of students' ability to build literate speech through the experiment and the statistical analysis of its results.

5. To carry out statistical analysis of the results of the experimental work to present recommendations from the point of view of the purpose and objects of the research.

The theoretical significance of the research

1. Linguistic, psychological, pedagogical and methodical features contributing to the development of students' speech have been specified in the course of studying the mother tongue, as well as other subjects taught in secondary school.

2. The principle of the phase sequence of the students' oral speech development process has been presented as a systematic process of speech development in the elementary and middle levels.

3. An applied and practical system promoting the development of students' oral speech was developed, tested and presented.

The practical relevance of research: The developed and tested system of exercises and the content of its methodological complex meet the requirements of the subject standard of the secondary school. Therefore, the abovementioned will contribute to the enrichment of the vocabulary of secondary school students. It can be used in the process of teaching both the mother tongue and other subjects in middle school. It can also be useful to teachers, methodologists, future educators and education policymakers.

The main research stages: The research has been carried out in three stages during the period of 2016-2023.

The following provisions are presented for the defence:

1. The study of the educational material provided by the standards and the subject program of the middle-school level of the Republic of Armeniaand the investment of the modern methodical complex are sufficient prerequisites for the development of students' oral speech.

2.Gven the age, pedagogical and psychological characteristics of middle school students, their cognitive interests, the originality of their satisfaction forms and gradual changes, socio-political progress, the program, textbooks, teaching manuals, methodological complex and teaching aids of the middle level of RA public school and the modernization of forms, the study, dissemination and investment of advanced practices are an imperative requirement.

3. The effectiveness of the oral speech development process of students in the middle level of the public school will be ensured not only by the methodically correct implementation of the complex of works provided by the program of that subject during the lessons of the mother tongue but also by the role given to the ability of students to build connected speech in the classes of all subjects taught in that level of education.

4. The complex of exercises developed by us, aimed at the development of the oral speech of the middle-schoollevel students during the lessons of the mother tongue and related subjects, and the effectiveness of which is substantiated by experimentation, the scientific-methodical guarantees contributing to the effectiveness of their application will fully contribute to the development of the oral speech of schoolchildren.

Structure and the volume of the work: The work consists of the introduction, three chapters, conclusions, recommendations, bibliography/references, and appendix. The overall volume of the work makes 190 typewritten pages.